ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 245 - Ա **21 հունիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 157-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» I-ին, II-րդ գլխի և IX-րդ գլխի 80-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթները Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության ավարտից հետո մեկ ամսյա ժամկետում հայտարարելու մասին» N 157-Ա որոշումը:

21.06.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Ք.Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2020թ. հունիսի 21 -ի
N 245-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթների
ժամանակացույց

1. «Վաղաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2020թ. սեպտեմբերի 3-ին, ժամը՝ 11^{00}-ին
2. «Լճաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2020թ. սեպտեմբերի 8-ին, ժամը՝ 11^{00}-ին
3. «Ծակքարի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2020թ. սեպտեմբերի 10-ին, ժամը՝ 11^{00}-ին
4. «Վարդենիկի ԱԿ» ՊՈԱԿ	2020թ. սեպտեմբերի 15-ին, ժամը՝ 11^{00}-ին
5. «Ծովագյուղի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2020թ. սեպտեմբերի 17-ին, ժամը՝ 11^{00}-ին
6. «Վ.Գետաշենի ԲԱ» ՊՈԱԿ	2020թ. սեպտեմբերի 23-ին, ժամը՝ 1^{00}-ին
7. «Լուսակունքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2020թ. սեպտեմբերի 25-ին, ժամը՝ 11^{00}-ին
8. «Սարուխանի ԲԱ» ՊՈԱԿ	2020թ. սեպտեմբերի 29-ին, ժամը՝ 11^{00}-ին
9. «Դդմաշենի ԲԱ» ՊՈԱԿ	2020թ. հոկտեմբերի 2-ին, ժամը՝ 11^{00}-ին
10. «Երանոսի ԲԱ» ՊՈԱԿ	2020թ. հոկտեմբերի 6-ին, ժամը՝ 11^{00}-ին
11.«Վարդենիսի պոլիկլինիկա» ՊՓԲԸ	2020թ. հոկտեմբերի 8-ին, ժամը՝ 11^{00}-ին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

19.06.2020

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ